ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«05» 06 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000058

Ձեռնարկողը՝ *«ԷՄ ԱՅ ԲԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ*
Ք. Երևան, Վ. Սուրենյանց 3/3

Գործունեությունը՝ ***«Ֆրոլովա Բալկա» ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 1Մ հորատանցքի շահագործման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Տավուշի մարզի

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Թարզյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000058

<05> 08 2020թ.

Տավուշի մարզի «Ֆրոլովա Բալկա» ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 1Մ հորատանցքի շահագործման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ներածական մաս

Ձեռնարկող՝	«ԷՄ ԱՅ ԲԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/ /Ա կատեգորիա/
Տեղադրման վայրը՝	Տավուշի մարզ, Դիլիջան համայնք

«Ֆրոլովա-Բալկա» ածխաթթվային հանքային ջրի հանքավայրը գտնվում է նույնանուն կիրճում, Դիլիջան քաղաքից 8 կմ հարավ-արևմուտք: Հանքավայրի կենտրոնական տեղամասի հարևանությամբ անցնում են՝ Դիլիջան-Երևան և Դիլիջան-Վանաձոր ավտոճանապարհները: Հանքային ջրի արդյունահանման աշխատանքների համար անհրաժեշտ բոլոր ենթակառուցվածքներն առկա են:

Նկարագրական մաս «ԷՄ ԱՅ ԲԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊ ընկերության /այսուհետ՝ ընկերություն/ կողմից «Ֆրոլովա-Բալկա» ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 1Մ հորատանցքից հանքային ջրի արդյունահանումն իրականացվել է 18.12.2012թ. թիվ ՇԱԹՎ 29/378 ընդերքօգտագործման իրավունքի (արդյունաբերական շշալցման) և 18.12.2012թ. թիվ ՊՎ-378 ընդերքօգտագործման պայմանագրի համաձայն՝ հանքային ջրի 28.0 հազ. մ^3/տարի տարեկան արտադրողականությամբ, 2007 թվականից թողարկելով՝ տարեկան 0.5 լիտրանոց ապակյա տարաներով, ինչպես նաև՝ 0.5; 1.0 և 1.5 լիտրանոց պլաստիկ տարաներով արտադրանք: Թողարկված արտադրանքը սպառվում է ներքին շուկայում և արտահանվում է Ռուսաստանի Դաշնություն: Ընկերության կողմից նախատեսվում է «Ֆրոլովա-Բալկա» ածխթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 1Մ հորատանցքով հաշվարկված և հաստատված պաշարի արդյունահանման համար ձեռք բերել նոր ընդերքօգտագործման իրավունք՝ հանքային ջրի արդյունաբերական (շշալցման) նպատակով: Ընկերության կողմից պահանջվող հանքային ջրի քանակը մնում է նույնը, կազմելով՝ 28.0 հազ. մ^3/տարի կամ 0.9 լ/վրկ: Հանքավայրի ծառայման ժամկետն ընդունվել է 50 տարի:

Հանքավայրի պաշարները հաստատվել են Հայկական ՍՍՀՄ երկրաբանական վարչության օգտակար հանածոնների պաշարների տարածքային հանձնաժողովի կողմից 31.10.1983թ. դրությամբ (արձանագրություն թիվ 27-1, 16.12.1983թ.) ԳՈՍ 132733-73-ին համապատասխան՝բժշկական նպատակների օգտագործման համար: Քանակները, ֆիզիկական և քիմիական կազմի բնութագրերը հետևյալն են.

Հանքային ջրի տեսակը	Ջերմաստիճանը T °C	Հանքայնացումը գ/լ	CO_2 լուծված	CO_2 ազատ	Հանքային ջրի պաշարները Ա կատեգորիայով		Ածխաթթու գազի պաշարները	
					լ/վրկ	մ³	գ/լ	տ/ մ³
1	2	3	4	5	6	7	8	9
Ածխաթթվային ջրակարբոնատային նատրիումային-կալցիումային	16,2	3,1-3,4	1,52	2,34	1,8	155,5	2,34	0,00234

«Ֆրոլովա-Բալկա» ածխթթվային հանքային ջրի քիմիական կազմը բնութագրում է ջրակարբոնատային, կալցիումային-մագնեզիումային կազմով, ցածր հանքայնացմամբ (մինչև 3,3 գ/լ), թույլ թթվային ռեակցիայով (PH-6.1-6.5), բարձր գազապարունակությամբ (ընդհանուր գազապարունակությունը 2գ/լ): Բակտերիոլոգիական անալիզների արդյունքներով ջրերը մաքուր են և ենթակա չեն նախնական մաքրման:

Գործող շալցման գործարանը, որը կառուցվել է 2001 թվականին, տեղադրված է Դիլիջան-Վանաձոր մայրուղու հարևանությամբ՝ նրա աջակողմյան լանջին, Դիլիջան համայնքի վարչական սահմաններում: Հանքավայրի թիվ 1Մ հորատանցքը գտնվում է գործարանից մոտ 4 կմ հեռավորության վրա, Ֆրոլովա-Բալկա կիրճում՝ Աղստև գետի նույնանուն վտակի աջ ափին: Թիվ 1Մ հորատանցքի կորդինատները Arm WGS-84 կոորդինատային համակարգով հետևյալն են՝ X=4508063 Y= 8482098, իսկ հորատանցքի գլխամասում կառուցված կապտաժային շինության կորդինատները և չափսերը ներկայացված է ստորև.

1	X = 45 08117	Y = 84 82136	1 - 2 6,96 մ
2	X = 45 08124	Y = 84 82135	2 - 3 6,11 մ
3	X = 45 08125	Y = 84 82141	3 - 4 6,96 մ
4	X = 45 08118	Y = 84 82142	4 - 1 6,11 մ

Հանքային ջուրը թիվ 1Մ հորատանցքից ինքանհոս տեղափոխվում է շալցման գործարան: Շշալցման գործարանի հողամասի նպատակային նշանակությունը /որը սեփականության իրավունքով պատկանում է Ընկերությանը/ արդյունաբերական է, օգտագործման նպատակը՝ արտադրամասի սպասարկման համար: Հողմասի ընդհանուր մակերեսը կազմում է 0.875 հա է, որտեղ շինությունը զբաղեցնում է 574.3 մ² մակերես: Շշալցման գործարանի հողամասում տեղակայված են՝ արտադրամասը, պահեստը և կաթսայատունը: Շշալցման արտադրամասը հագեցած է ժամանակակից տեխնոլոգիաներով և սարքավորումներով: Արտադրամասում գործող երկու հոսքագծերից մեկը նախատեսված է ապակյա 0,5 լ տարողությամբ տարաների շալցման համար, իսկ մյուսը՝ 0,5 լ, 1,0 լ և 1,5 լ պլաստիկ տարողություններով տարաների շալցման համար: Հերմետիկացված են բոլոր սարքավորումները, որոնք

օգտագործվում են պահեստավորման, սառեցման, ախտահանման և հանքային ջրի շալցման համար:

Հորատանցքի գլխամասում կառուցված է 6,11 x 6,96մ չափերով կապտաժային շինություն, որի հատակը հիդրոմեկուսացված է: Գոյություն ունեցող կապտաժային շինություննունի վերանորոգման կարիք: Կապտաժային շինությունը կահավորված է հորատանցքի գլխամասային սարքավորումներով (փականներ, ջրահաշվիչ, գազանջատիչ, գազաչափիչ և այլն): ՀՀ Կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1267 որոշման և ՀՀ առողջապահության նախարարի 2003 թվականի մարտի 10-ի N137 հրամանի պահանջների ապահովման նպատակով նախատեսվում է թիվ 1Մ հորատանցքի գլխամասային սարքավորումների, այդ թվում՝ ջրաչափի, գազանջատիչի փոխարինում և վերանորոգում, ինչպես նաև սանիտարական պահպանման գոտու ցանկապատում՝ կենդանիների և կողմնակի անձանց մուտքը կապտաժային շինության տարածք բացառելու և հորատանցքի պահմանման գոտուն ներկայացվող պահանջներն ապահովվելու համար: Հանքային ջուրը՝ 114 մմ տրամագծի 4 կմ երկարությամբ չժանգոտվող, պոլիէթիլենային խողովակաշարով հորատանցքից ինքնահոս տեղափոխվում է հանքային ջրի շալցման գործարան: Խողովակաշարի ուղեգիծն անցնում է գետի ափի հարևանությամբ, ճանապարհի եզրով: Այն ամբողջությամբ մեկուսացված և տեղադրված է 160 մմ մետաղյա խողովակաշարի ներսում: Խողովակաշարը տեխնիկապես բավարար վիճակում է, վերանորոգման կարիք չունի:

Հաշվի առնելով ածխաթթու գազի դերը աղակալման կանխարգելման գործում, շալցման տեխնոլոգիական գործընթացներն իրականացվում են այնպես, որպեսզի բացառվի, կամ նվազագույնի հասցվի ջրի դեգազացիան: Պոլիէթիլենային խողովակի ներքին տրամագիծը /50 մմ/ և խտությունն ընտրվել է ելնելով խողովակի ամբողջական կտրվածքով հոսքի հանգիստ տեղափոխման անհրաժեշտությունից:

Արտադրամասում հանքային ջուրը. ինքնահոս լցվում է 25մ³ հերմետիկությունը ապահովված հորիզոնական տարողության մեջ, որոում ապահովվում է հանքային ջրի քիմիական կազմի կայունությունը և մանրեներով աղտոտման բացառումը: Մասնիկների հեռացման նպատակով հանքային ջուրը կենտրոնական պոմպով ուղղորդվում է ֆիլտրացիայի, որտեղից ջուրը լցվում է 25մ³ միջանկյալ հորիզոնական՝ ներքին էմալապատված տարողության մեջ, որը նախատեսված է ջրի պահեստավորման համար: Այնուհետև կենտրոնախույս պոմպով մղվում է 2 մթն. աշխատանքային ճնշման ֆիլտր, որտեղից ուղարկվում է սառեցման ջերմափոխանակիչ: Նախնական ֆիլտրացված և սառեցված հանքային ջուրը լցվում է 3 տոննա ծավալով տարողություն, որտեղից ուղղորդվում է պոլիէթիլենային և ապակյա շալցման սարքավորումներ: Արտադրամասում 0,5լ և 0,33լ ապակյա շշերի շալցումը իրականացվում է 2000-3000 շիշ/ժամ արտադրողականությամբ ավտոմատ հոսքագծով, որը համալրված է՝ GP-12 լվացման մեքենայով, GD-12 - շալցման մեքենայով և FXZ-6 խցանման ավտոմատով: Պոլիէթիլենային շշերում հանքային ջրի շալցումը իրականացվում է ավտոմատ հոսքագծով, որը համալրված է ZCP-18 լվացման մեքենայով, GD-12 - շալցման մեքենայով և YGX-6 խցանման մեքենայով:

Ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի շահագործումն իրականացվելու է՝ հանքավայրի հիդրոերկրաբանական պայմաններին, հանքային ջրերի հաստատված

պաշարների քանակին, նրանց քիմիական կազմին, ջերմաստիճանին և ռեժիմին համապատասխան: «Ֆրոլովա-Բալկա» ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի արդյունաբերական շահագործման համար կարևորվում են հետևյալ միջոցառումների իրականացումը, այդ թվում՝

- Հորատանցքի գլխամասում կապտաժային շինության պարտադիր առկայության և գլխամասային սարքավորումների պատշաճ վիճակի ապահովումը,
- ջրհավաք հորատանցքից արդյունաբերական շահագործման իրականացում չժանգոտվող (խմելու որակի) խողովակաշարով
- ջրհավաք հորատանցքի առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտիով ապահովում՝ հորատանցքի ելքը հնարավոր աղտոտումից և գարնանային սելավների պահպանելու համար,
- սիստեմատիկ մշտադիտարկումների իրականացում՝ հորատանցքի շահագործման ռեժիմի և տեխնիկական վիճակի նկատմամբ,

Վերը նշված միջոցառումների ապահովման համար նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները՝

- թիվ 1Մ հորատանցքի գլխամասային սարքավորումների մոնտաժում, անհրաժեշտության դեպքում դրանց փոխարինումը նորերով,
- հորատանցքի տեխնիկական վիճակի ստուգում՝ անհրաժեշտության դեպքում հորատանքի մաքրում /մասնագիտական կապալառու կազմակերպության կողմից/ և չժանգոտվող սննդային խողովակի իջեցում հորատանցք,
- կապտաժային շինության վերանորոգում և հորատանցքի շուրջ հիդրոիզոլյացիայի իրականացում (2.0մx2.0մx0.5մ), որը կբացառի մակերևութային աղտոտված ջրերի մուտքը դեպի հորատանցք,
- որպես հակասելավային միջոցառում գետի աջ ափին բետոնյա պատնեշի կառուցում,
- սանիտարական պահպանման գոտու ցանկապատում,
- սանիտարական պահպանման գոտում շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգի և ռեժիմային դիտարկումների իրականացում, անհրաժեշտության դեպքում պաշարների վերագնահատում,
- աշխատանքների իրականացման հետևանքով խախտված հողի վերականգնում:

Հանքային ջրի ռեժիմը շահագործման ամբողջ ընթացքում արտահայտվում է ջերմաստիճանի և քիմիական կազմի կայունությամբ: Հանքային ջրերի պաշարները վերականգնման առանձնահատկություն ունեն և շահագործման ընթացքում պահանջվում է զուգահեռաբար իրականացնել ջրերի որակի, քանակի, շահագործման ռեժիմի նկատմամբ ուսումնասիրություններ և լաբորատոր հետազոտություններ՝ գնահատելու հանքավայրում տեղի ունեցող քանակական և որակական փոփոխությունները:

Հանքավայրի առաջին սանիտարական պահպանության գոտու ապահովման նպատակով նախատեսում է կապտաժային շինությունից 30մ հեռավորության վրա իրականացնել ցանկապատում, ապահովելով բարձր սանիտարա-հիգիենիկ պայմաններ: Սնման տեղամասում բացակայում են հնարավոր աղտոտող օբյեկտները: Հողային ծածկույթի խախտում տեղի է ունենում միայն սանիտարական պահպանման գոտու կառուցման աշխատանքներում՝ ցանկապատի սյունների տեղադրման ժամանակ /50 մ²

մակերեսով տարածքում/: Խախտված տարածքների և հողի շերտի վերականգնման համար նախատեսված ծախսերը գնահատվել է 50 000 ՀՀ դրամ:

Հանքավայրի թիվ 1 Մ հորատանցքի հանքային ջրի պատշաճ շահագործման համար Ընկերության կողմից նախատեսվող ֆինանսական ներդրումները կազմում են 8 800 000 ՀՀ դրամ, որի մեջ մտնում են՝ 1 Մ հորատանցքի տեխնիկական վիճակի ստուգման, գլխամասային սարքավորումների մոնտաժման և փոխարինման, հիդրոմեկուսացման, ռեկուլտիվացիայի, սանիտարական պահպանման գոտու ցանկապատման, մշտադիտարկումների իրականացման այլ աշխատանքների ծախսեր: Հանքավայրի հանքային ջրի արդյունահանման ժամկետը լրանալուց հետո ջրհավաք հորատանցքի բերանի փականը կփակվի և կկապարակնքվի, հանքավայրը կկոնսերվացվի

Եզրափակիչ մաս: Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի պահանջներով: Գնահատման և փորձաքննության փուլերում գործունեության իրականացման վերաբերյալ Դիլիջան համայնքում անցկացվել են հանրային քննարկումներ /չորս քննարկում/: Փորձաքննական գործընթացին մասնակցել են պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներ, առողջապահության նախարարությունը, որոնց կողմից ներկայացված դիտողությունները և առաջարկությունները ևս հաշվի են առնվել փորձաքննության գործընթացում:

Ամփոփելով վերոգրյալը, կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում, պայմանավորված շինարարական աշխատանքների տեսակներով՝ հողային ծածկույթի, լանդշաֆտի ամբողջականության կեսաբազմազանության, մթնոլորտային օդի և սոցիալական միջավայրի վրա նոր ազդեցություններ չեն կանխատեսվում: Հանքավայրի արդյունահանման և արդյունաբերական շահագործման համար ստանալով «Ֆրոլովա-Բալկա» ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 1 Մ հորատանցքի արդյունահանման նոր իրավունք և իրականացնելով գործունեությունը, Ընկերությունը կշարունակի ապահովել տասնյակ աշխատատեղեր, որն իր հերթին կնպաստի տեղի բնակչության սոցիալական պայմանների և կենսամակարդակի բարելավմանը:

Փորձաքննական պահանջներ

1. ՀՀ Լոռու մարզի «Ֆրոլովա-Բալկա» ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 1 Մ հորատանցքից հանքային ջրի արդյունահանման ընթացքում, սանիտարական պահպանման առաջին գոտու սահմաններում սանիտարա-հիգիենիկ պայմանների ապահովման, ինչպես նաև հորատանցքը աղտոտումից և սպառումից զերծ պահելու նպատակով անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ առողջապահության նախարարի՝ 29 նոյեմբերի 2002 թ. N 803 և 10 մարտի 2003թ. N 137 հրամանների պահանջներով:

2. Հանքային ջրի արդյունահանումը հաստատված պաշարների քանակին, որակին և ռեժիմին համապատասխան իրականացնելու նպատակով, անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության՝ 22 նոյեմբերի 2012թ. N 1484-Ն որոշման պահանջներով: Ջրհավաք հորատանցքի առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական

պահպանության գոտում իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների /հող, ջուր, օդ/ մշտադիտարկումներ Կառավարության 2018թ. փետրվարի 22-ի N191-Ն որոշման պահանջներով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԷՄ ԱՅ ԲԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ կողմից ներկայացված Տավուշի մարզի «Ֆրոլովա Բալկա» ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 1 Մ հորատանցքի շահագործման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ՝ Հ. Մկրտչյան